ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Ղ. ՍԵՎՅԱՆ. ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (XX Դ. ՍԿԻԶԲ), ԵՐԵՎԱՆ, 1971, 221 էջ

Փիլիսոփայության սովետահայ պատմաբանները նշանակալից աշխատանք են կատարել, բազմադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման պատմության գիտական հետազոտման ուղղությամբ։ Սակայն իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների ժամանակաշրջանի հայ փիլիսոփայական ուղղությունները և հոսանքները տակավին բազմակողմանի չեն ուսումնասիրվել և հարկ է նկատել, որ այդ թեման աչքի է ընկնում իր բարդությամբ։ Այդ բացը զգալիորեն լրացնում է գրախոսվող աշխատության հեղինակը, որը կատարել է երկարատև ու քրտնաջան աշխատանք, հաղթահարել դժվարությունները և ընթերցողին ներկայացրել արժեքավոր ուսումնասիրություն։

Իր աշխատությունում Վ. Ղ. Սևյանը հարուստ փաստական նյութի հիման մրա հիմնավորում է XX դ. սկզբի հայ բուրժուական փիլիսոփայության ճգնաժամը՝ անցումը ավանդական փիլիսոփայական ուղղություններից դեպի իմպերիալիզմի ժամանակաշրջանի հետադիմական հոսանքները՝ նեոկանտականությունը, պոզիտիվիզմը, պրագմատիզմը, որոնք իրենց խտացված արտահայտությունը գտան մախիզմի մեջ։

Ուսումնասիրողը ցույց է տալիս հայ մարքսիստ-լենինյանների պայքարը բուրժուական փիլիսոփայական հոսանքների դեմ, այդ պայքարում մարքս-լենինյան փիլիսոփայության պաշտպանումը, հիմնավորումը և հետագա զարգացումը, որը կապված է Վ. Ի. Լենինի մերձավոր զինակիցների՝ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ալ. Մյասնիկյանի, Ս. Կասյանի, Աս. Մռավյանի, Ս. Հովսեփյանի և մյուս ականավոր հեղափոխականների անվան հետ։ Աշխատության հեղինակը նշում է, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին կապիտալիզմը արագ թափով սկսեց զարգանալ նաև հայ իրականության մեջ, հանդես եկան ներհակ ուժեր, քաղաքական տարբեր ձգտումներ ու հակադիր աշխարհայացք ունեցող նոր դասակարգեր՝ բուրժուազիան և պրոլետարիատը։ Սոցիալ-տնտեսական նոր պայմաններին համապատասխան հայ իրականության մեջ տարածվեցին տրամագծորեն հակադիր երկու աշխարհմրմրոնումներ՝ մարքսիստական փիլիսոփայությունը՝ պրոլետարիատի աշխարհայացքը և այդ դարաշրջանի հայ բուրժուազիայի հոգևոր զենքը՝ իդեալիստական փիլիսոփայությունն իր տարատեսակներով։

Հայ իրականության մեջ մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը, հեղափոխական շարժումների վերելքը և բոլշևիկյան կուսակցական կազմակերպությունների ստեղծումն իրարանցում առաջացրին հայ քաղաքական կուսակցությունների, բուրժուա-ազգայնական մտավորականության շրջանում։ Բուրժուազիայի գաղափարական պաշտպանները գրոհի ելան մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ։ Նրանք բոլոր միջոցներով և եղանակներով խեղաթյուրում էին մարքսիզմի փիլիսոփայական հիմունքները, նպատակ ունենալով գաղափարապես զինաթափել պրոլետարիատին։

Հեղինակը իրավացիորեն ընդգծում է, որ չունենալով կուռ և ամբողջական աշխարհայացք, հայ բուրժուա-ազգայնական գաղափարախոսները իդեալիստական փիլիսոփայության մի հոսանքից անցել են մյուսին, մնալով սուբյեկտիվ իդեալիզմի շրջանակներում։

Գաղափարախոսության, հատկապես փիլիսոփայության և սոցիոլոգիայի բնագավառում ստեղծված իրադրությունը հայ մարքսիստներին պարտավորեցնում էր համառ ու անհաշտ պայքար մղել բուրժուական քաղաքական և փիլիսոփայական հոսանքների դեմ։ Առանց այդ պայքարի անհնար էր մարքսիստական փիլիսոփայությունը պաշտպանել ամեն տեսակ հարձակումներից։

Ուսումնասիրողը բավական հարուստ ու համոզեցուցիչ փաստերով վեր է հանում հայ մարքսիստների անհաշտ, սկզբունքային պայքարը մարքսիզմի թշնամիների դեմ։ Նա նշում է, որ մախիզմը կամ էմպիրիոկրիտիցիզմը իդեալիստական փիլիսոփայության տարատեսակներից՝

մեկն է։ Մարքսիստական փիլիսոփայությունը սուբյեկտիվ իդեալիզմով նենգափոխելու, մարքսիզմը մախիստական ոգով ռևիզիայի ենթարկելու փորձերը Ռուսաստանում հանդես եկան էմպիրիոմոնիզմի, էմպիրիոսիմվոլիզմի ձևով, իսկ հայ իրականության մեջ մախիզմը «ֆենոմենալիզմ» կամ «ռեալիստական փիլիսոփայություն» անվան տակ, որը հավակնություն ուներ վեր բարձրանալ և մատերիալիզմից, և իդեալիզմից։ Հեղինակը բացահայտում է ֆենոմենալիզմի իմացաբանական, սոցիալ-քաղաքական արմատները, հիմնական փիլիսոփայական ըմբռնումները և դալիս այն եզրակացության, որ այն մատերիալիզմից և իդեալիզմից վեր կանգնած ինչ-որ ինքնուրույն փիլիսոփայական ուղղություն չէ, այլ սուբյեկտիվիդեալիզմի տարատեսակներից մեկը։ Մենագրության մեջ բացահայտվում են ֆենոմենալիզմի տեսական ակունքները, փիլիսոփայական հիմնական սկզբունքները, մատերիայի և գիտակցության փոխհարաբերության հարցի սուբյեկտիվ իդեալիստական լուծումը հայ ֆենոմենալիստների կողմից։ Փիլիսոփայական հիմնական հարցերում հեղինակը իր դիտական խոսքն է ասում, հիմնավորելով, որ հայ ֆենոմենալիստները կանգնած են եղել սուբյեկտիվ իդեալիզմի դիրքերում։ Նա գրում է. «փիլիսոփայության արմատական հարցի՝ հոգեկանի և ֆիզիկականի, կեցության և գիտակցության հարաբերության հարցի լուծման միակ եղանակը սուբյեկտիվ իդեալիստները դտան նրանց նույնացման մեջ»։ Քննադատելով կեցության և գիտակցության նույնացման սուբյեկտիվ իդեալիստական սկզբունքը՝ Ստ. Շահումյանը գրել է. այդ «դրությունը, ըստ իս, կործանում է Մարքսի ամբողջ սիստեմը»։

Վ. Սկյանի մենագրության չորրորդ գլուխը նվիրված է հայ սուբյեկտիվ իդեալիստների ագնոստիցիզմի քննադատությանը։ Այստեղ վերլուծվում են իմացության պրոցեսի ֆենոմենալիստական աղավաղման, ճշմարտության ու նրա չափանիշի հարցերը։

Նա իրավացիորեն շեշտում է աշխարհի, նրա զարգացման օրինաչափությունների իմացության հարցերում հայ ֆենոմենալիստների հանդես բերած ագնոստիցիզմը։ Գրքում ցույց է տրվում, որ երևույթի խզումն էությունից նրանց մոտ դրսևորվեց ֆենոմենալիզմի միջոցով, որը մարդկային իմացությունը ընդունում է որպես ֆենոմենների՝ երևույթների աշխարհ, որը չի արտահայտում նոումենի՝ էության ոլորտը։

Գրքում քննվում է նաև ճշմարտության և նրա չափանիշի սուբյեկտիվ իդեալիստական ըմբռնման հարցը։ Ճշմարտության հարցում ագնոստիցիզմի հայ չատագովները կանգնած են ռելյատիվիզմի դիրքերում։ «Իրը... միայն մի հարաբերական միություն է, բայց երբեք բացարձակ, հաստատուն՝ նման որպիսություններին։ Վարդը «հոտ է արձակում» միայն մեր հոտոտելիքի համար, շաքարը «քաղցր» է միայն մեր լեզվի համար»,—գրել է Ե. Ֆրանգյանը։ Վ. Խորենին նույն ոգով պնդել է. «բոլոր «իդեաներն» էլ միայն հարաբերական նշանակություն ե... արժեք կունենան»։ Վկայակոչելով նման բազմաթիվ մտքեր, գրախոսվող մենագրության հեղինակը եզրակացնում է. «եթե ճշմարտությունը միայն հարաբերական է, հետևաբար և. չկա օբյեկտիվ ճշմարտություն, նշանակում է չկան նաև ընդհանուր օրենքներ, տեսություններ, չկա գիտություն։ Ռելյատիվիստների հայացքների մեթոդաբանական արատը, ոչ թե այն է, որ նրանք ընդունում են միայն հարաբերական ճշմարտությունը, այլ այն, որ ժխտում են հարաբերականի մեջ բացարձակը, ամեն ինչ հանգեցնում են հարաբերական ճշմարտության։ Դրանում է ագնոստիկների աքիլլեսյան գարշապարը»։

Ճշմարտության չափանիշի հարցում հայ սուբյեկտիվ իդեալիստները փորձեցին օգտվել նաև պրագմատիզմից։ Ճշմարտությունն ինքնանպատակ չէ, ճշմարտությունը միմիայն կյանքի որևէ կարիքի գոհացման մի միջոց է։ Ճշմարտությունը և օգուտը նույնական են, ուրեմն ճշմարիտն այն է, ինչ օգուտ է բերում, անկախ այն բանից, թե այդ միտքը համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը, թե ոչ, ստուգված է մարդու արտադրական-հասարակական պրակտիկայում, թե ոչ—ահա ճշմարտության չափանիշի հայ սուբյեկտիվ իդեալիստների ըմբռնումը։ Մենագրության հեղինակը քննադատում է ճշմարտության վերաբերյալ հայ սուբյեկտիվ-իդեալիստների հայացքները և տալիս՝ այդ հարցի մարքս-լենինյան փիլիսոփայության ըմբռնումը։

Մենագրության հեղինակը բացահայտում է նաև ռևիզիոնիզմի սոցիալ-դասակարգային էությունը, նշելով, որ այն հանդես եկավ որպես բուրժուական գաղափարախոսության դրսևորում, բանվոր դասակարգի վրա նրա ազդեցության տարածող։ Ռևիզիոնիզմը դրսևորվեց նաև հայ իրականության մեջ, ի դեմս «սպեցիֆիկների» (սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության) գաղափարախոսներ՝ Դավիթ Անանունի, Բախշի Իշխանյանի և ուրիշների։ Վ. Ի. Լենինը հայ սպեցիֆիկներին հետևյալ բնութագիրն է տվել. «Դրանք մի զույգ ժնևյան

կազմալուծիչներ են, որոնք այստեղ հայտարարում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ։ Դա բունդական կրիաաուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար... Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են զրականագետ-կազմալուծիչների այդ շայկային»[1]։

Ի հակադրություն մարքսիստական փիլիսոփայության նեոկանտական ռևիզիայի, մենագրության մեջ ըստ ամենայնի վերլուծվում են դիալեկտիկական մատերիալիզմի, հատկապես իմացաբանության տեսության հիմնական դրույթները։

Մարքսիզմի դեմ պայքարում հայ ռևիզիոնիստներն իրենց հոգևոր հայրերի օրինակով, մարքսիստական մատերիալիստական դիալեկտիկայի հեղափոխական ոգին նույնացնում էին Հեգելի իդեալիստական սպեկուլյատիվ դիալեկտիկական մեթոդի հետ, չցանկանալով տեսնել մարքսիստական դիալեկտիկական մեթոդի և Հեգելի իդեալիստական դիալեկտիկայի արմատական տարբերությունը։

Ռևիզիոնիստները մոռանում էին, որ Մարքսը տվյալ հարցում փիլիսոփայության մեջ իսկական հեղափոխություն կատարեց, ինչպես Էնգելսն է ասում ոտքի վրա դրեց դիալեկտիկան, որը Հեգելի մոտ գլխիվայր էր կանգնած, երևան հանեց միստիկական կեղևի տակ թաքնված ռացիոնալ հատիկը՝ ուսմունքը զարգացման մասին[2]. Մարքսն ինքն է ժամանակին նշել իր դիալեկտիկական մեթոդի և հեգելյան իդեալիստական դիալեկտիկայի արմատական տարբերությունը։ Այնուհետև ուսումնասիրողը նշում է, որ ռևիզիոնիստները առավելապես գրոհում էին մարքսիստական դիալեկտիկայի «միջուկի» հակասությունների միասնության և պայքարի օրենքի դեմ, հատկապես ջանալով սքողել հակադրությունների միջև գոյություն ունեցող պայքարը, հանդես գալով հակասությունների հաշտեցման և գոնեհիկ էվոլյուցիոնիզմի գաղափարի պաշտպանության դրոշի ներքո։ Նա մեկնաբանում է, թե ինչու բուրժուական զաղափարախոսները և նրանց ձայնակից ռևիզիոնիստներն արշավ սկսեցին դիալեկտիկայի մարքսիստական ըմբռնման դեմ։ «Իր ռացիոնալ կերպարներով դիալեկտիկան,— գրել է Մարքսը,— բուրժուազիայի ու նրա դոկտրինյոր-իդեոլոգներին լուկ զայրույթ ու սարսափ է ազդում, որովհետև իրականության պոզիտիվ ըմբռնման մեջ նա միաժամանակ մտցնում է իրականության բացասման նրա անհրաժեշտ կործանման ըմբռնումը, յուրաքանչյուր իրականացած ձև նա դիտում է շարժման մեջ, հետևաբար, նաև նրա անցողական կողմից. նա ոչ մի բանի առաջ չի խոնարհվում և իր բուն էությամբ քննադատական է ու հեղափոխական»[3]։

Մենագրության մեջ ցույց է տրված հայ մարքսիստների պայքարը դիալեկտիկան մետաֆիզիկայով նենգափոխման փորձերի դեմ, մյուս կողմից լուսաբանվում է դիալեկտիկայի, նրա օրենքների և կատեգորիաների մարքսիստական ըմբռնումը։

Վ. Սևյանի մենագրությունը զերծ չէ թերություններից. այսպես օրինակ, գերագնահատված է հայ իրականության մեջ կապիտալիզմի զարգացումն իմպերիալիզմի ժամանակաշրջանում, կան անտեղի զուգահեռներ արևմտաեվրոպական, ռուսական փիլիսոփայության պատմության և հայ իրականության մեջ հանդես եկած փիլիսոփայական հոսանքների միջև։ Երբեմն քննվում են հարցեր՝ առանց բավարար չափով փաստարկելու։ Այս բոլորով հանդերձ Վ. Ղ. Սևյանի մենագրությունը «Հայ բուրժուազիայի փիլիսոփայության քննական վերլուծությունը (XX դ. սկիզբը)» ուշագրավ ներդրում է հայ փիլիսոփայական մտքի զարգացման պատմության մեջ։

Մ. Հ. ԱՆՏՈՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 333։
2. Տ'ես К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 21, стр. 302, 310.
3 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 20։